

ՍԱՂՄՈՍ 97

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՋ գորությունը և իշխանությունը <u>MT ներածություն</u> <u>ձև</u>	Փառաբանության երգ ինքնիշխան ՏԻՐՈՋԸ	Աստծո թագավորու- թյունը մեծարող օրհներգ	Աստված գերագույն Իշխանը	Յահվեի հաղթանակը
97:1-6	97:1 97:2-6	97:1-5	97:1-6	97:1-2 97:3-4 97:5-6
97:7-9	97:7-9	97:6-9	97:7-9	97:7 97:8 97:9
97:10-12	97:10-12	97:10-12	97:10-12	97:10 97:11

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԵՆԿՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը, ինչպես Սաղմոս 96-ը, ունի համաշխարհային շեշտադրություն (Էսկատոլոգիական):

1. երկիրը, Սաղմ. 97:1 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՆԴ)
2. աշխարհը, Սաղմ. 97:4

3. Տերը (*Աղոն*) ամբողջ երկրի, Սաղմ. 97:5բ (տես՝ Հեսու 3:13, Միք. 4:13)
4. բոլոր ժողովուրդները, Սաղմ. 97:6բ
5. Դու Բարձրյալ Տեր ես ամբողջ երկրի վրա, Սաղմ. 97:9ա
6. Դու բարձր ես բոլոր աստվածներից (*Էրոհիս*), Սաղմ. 97:9բ

Բ. Տեսարանը հնարավոր է վերցված է՝

1. Ելից 19-ից, Սինա լեռը (այսինքն՝ օրհնությունները, տես՝ Ելից 19:9, 2 Օրինաց 4:11)
2. Սաղմոս 18:7-15-ից (այսինքն՝ դատաստան)
Օրհնության կամ դատաստանի համար ՅԱՀՎԵԻ ներկայությունը պատճառ է հանդիսանում, որ ֆիզիկական ստեղծագործությունը ուրախանա՝ ցնծա (տես՝ Սաղմոս 97:4-5):

Գ. Վերջին պարբերությունը ընդգծում է ուխտի հավատքի հնազանդության կողմը: Ես հաճախ եմ ասում, որ ՀԱՍՈՒՆ սուրբգրային հավատքը՝

1. անձ է, որին պետք է ընդունել
2. այդ անձի վերաբերյալ ճշմարտությունները, որոնց պետք է հավատալ
3. այդ անձի կյանքի պես ապրելակերպ

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 97:1-6

**¹ՏԵՐՆ Է թագավորում, երկիրը թող ցնծա՝
Բազմաթիվ կղզիներ թող ուրախանան:**
**²Նրա շուրջը ամպ ու խավար կա,
Արդարությունն ու իրավունքը Նրա աթոռի հիմներն են:**
**³Նրա առջևից կրակ է գնում
Ու այրում է Նրա շուրջը եղող թշնամիներին:**
**⁴Նրա փայլակները աշխարհն են լուսավորում,
Երկիրը տեսնում ու դողում է:**
**⁵Բլուրները մոմի պես հալչում են ՏԻՐՈՉ ներկայությունից,
Ամբողջ երկրի ՏԻՐՈՉ ներկայությունից:**
**⁶Երկինքները հռչակում են Նրա արդարությունը,
Ու բոլոր ժողովուրդները տեսնում են Նրա փառքը:**

97:1-6 Տե՛ս Համատեքստային Հասկացություններ Ա և Բ:

97:1 «ՏԵՐՆ Է թագավորում» Սա հաստատություն է, որ ՅԱՀՎԵՆ որպես արարիչ է: Հուդայականությունը Նրան անվանում է «Տիեզերքի Թագավոր»: Նա է միակ ճշմարիտ Աստվածը:

Եբրայերեն ԲԱՅԵՐԻ ժամանակի տարրը պետք է որոշվի համատեքստից:

1. Այս ճշմարտությունը հաճախ արտահայտվում է ՎԱՂԱԿԱՏԱՐՈՒՄ, որը ցույց է տալիս ավարտված գործողություն՝ Սաղմ. 93:1, 96:10, 97:1, 99:1, Եսայի 24:23, 52:7
2. Այն նաև արտահայտվում է ԱՆԿԱՏԱՐԻ միջոցով, որը ցույց է տալիս շարունակվող գործողություն՝ Ելից 15:18, Սաղմ. 29:10, 146:10
3. առանց ԲԱՅԻ, միայն համատեքստի միջոցով՝ Սաղմ. 10:16, 47:2

Ներկա պահին, այս ընկած աշխարհում, ՅԱՀՎԵԻ տիրակալությունը ակնհայտ չէ, սակայն մի օր այն ակնհայտ է դառնալու Մեսիայի անձի և գործի միջոցով (տես՝ Եսայի 9:6, Երեմ. 23:5, Միքիա 5:2-5, Դուկաս 1:32,33, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԿ-ՅԱՆ ՏԻՏՂՈՍՆԵՐ ՀԱՏՈՒԿ ԵԿՈՂԻ ՀԱՄԱՐ): Մեսիայի գործը իր գագաթնակետին կհասնի ՅԱՀՎԵԻ թագավորության ժամանակ (տես՝ 1 Կորնթ. 15:24-28, Փիլ. 2:6-11):

Մեր Աստվածը թագավորում է, միշտ թագավորել է և միշտ թագավորելու է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՈՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏԻՐԵԼԸ

❖ ՅԱՀՎԵԻ թագավորության լույսի ներքո սա կարող է վերաբերել՝

1. «թող երկիրը ցնծա» - BDB 162, KB 189, *Qal* ՀԱՅՅԱԿԱՆ ա. բոլոր ազգերից հավատարիմ հետևորդները բ. ազգերը հավատքի դարձ են ունենում դեպի ՅԱՀՎԵՆ
2. «բազմաթիվ կղզիներ թող ուրախանան» - BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով. «կղզիներ» խոսքը (բառացի՝ «ափամերձ տարածքներ», BDB 15) արտահայտում է տիեզերական շեշտադրություն (տես՝ Սաղմոս 96), հաճախ նկատի ունենալով հայտնի աշխարհը (այսինքն՝ այն հեռու և մոտ նավահանգիստները, որոնք այցելում էին Փյունիկյան առևտրականները, այսինքն՝ Սաղմ. 72:8-10): Առաջին տողի «երկիրը» զուգահեռ է երկրորդ տողի «շատ կղզիներ» խոսքին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

97:2 Սաղմոս 97:2ա-ի նկարագրությունը հնարավոր է բխում է երկու աղբյուրներից: Տե՛ս Համատեքստային Հասկացությունները, Բ: Այս պարբերության մեջ այն կարծես թե արտացոլում է հայտնության Աստծուն (այսինքն՝ աստվածհայտնությունը) և դատաստանը (տես՝ հհ. 2բ, 3): Նրա հակառակորդները պարտված են, սակայն ամբողջ երկրի հավատարիմ հետևորդները ցնծում են Նրա «լույսով» և ներկայությամբ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

❖ **«Ամպերը»** «Ամպեր» խոսքի կիրառությունը թե՛ ՀԿ-ում և թե՛ ՆԿ-ում շատ հետաքրքիր է: Ես ներառել եմ գրառումներ 2 Օրինաց 4:11 և Հայտն. 1:7-ից:

Բ Օրինաց 4:11 «խավար, ամպ և թանձր մառախուղ» ՅԱՀՎԵԻ ֆիզիկական ներկայությունը կարելի է հասկանալ երկու կերպ.

1. հրաբխային երևույթ – Ելից 19:18, Սաղմ. 68:7-8, 77:18, 97:2-5, Դատ. 5:4-5, 2 Թագ. 22:8, Եսայի 29:6, Երեմ. 10:10
2. փոթորիկ – Ելից 19:16,19, Սաղմ. 68:8, 77:18, Դատ. 5:4, Եսայի 29:6, Նաում 1:3:

Հետևաբար թանձր խավարը (տես՝ 5:22, 2 Թագ. 22:10, 3 Թագ. 8:12, 2 Մնաց. 6:1) հնարավոր է լինի՝

1. մոխրի ամպեր
2. անձրևի ամպեր

Այս ծածկոցը Իսրայելի պաշտպանության համար էր (տես՝ Ելից 19:18): Նրանք կարծում էին, որ եթե մարդիկ նայեին Աստծուն, ապա կմեռնեին (տես՝ Ծննդ. 16:13, 32:30, Ելից 3:6, 20:19, 33:20, Դատ. 6:22-23, 13:22):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՄՊԵՐՈՎ ԳԱԼՈՒՍՏԸ

Հայտն.1:7 «Ահա, Նա գալիս է ամպերով» Այս համարը հնարավոր է Հայտն. 1:1-ի հրեշտակի կողմից բացականշություն է եղել: Սա ակնհայտ անդրադարձ է Քրիստոսի Երկրորդ Գալստյանը:

❖ **«Արդարությունն ու իրավունքը Նրա աթոռի հիմերն են»** «Աթոռը» թագավորության և իշխանության դարձվածք է:

ՅԱՀՎԵԻ թագավորությունն ունի բարոյական տարածաչափություն, ինչպես և Նրա ստեղծագործությունը (տես՝ Սաղմ. 97:10-12):

Հենց այս համարը կիրառվում է Սաղմ. 89:14-ում: Մենք պետք է զգույշ լինենք չտարանջատելու արդարացումը սրբացումից (տես՝ Մատթ. 28:18-20):

97:3 «Կրակ» Սա վերաբերում է ՅԱՀՎԵԻ ապագայի դատաստանին (տես՝ Մաղ. 4:1): Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՐԱԿ:

❖ **«Եվ այրում է Նրա շուրջը եղող թշնամիներին»** AB առաջարկում է, որ MT-ի վերջին արտահայտությունը երբայերենում կարելի է չեղարկվել և ընթերցվել «և բոցավառվում է Նրա շուրջը» (էջ՝ 361): Այն մատնանշում է, որ սա լավագույնս բացատրում է Սաղմ. 50:3 և Հովել 2:3: Սա ավելի շատ է համապատասխանում Սաղմ. 97:4-ի գուհագեռականությանը:

97:4 «Երկիրը» Ինչպես մյուս բոլոր ԳՈՅԱԿԱՆՆԵՐՆ այս Սաղմոսում, սա էլ անձնավորված ԳՈՅԱԿԱՆ է՝ երբայերենում տարածված բանաստեղծական տեխնիկա:

❖ **«Նրա փայլակները»** ՀԿ-ի նկարագրության այս մասը փոխանցում է Քանանի պտղաբերության աստծո՝ *Բահաղի* գործողությունները ՅԱՀՎԵԻ համեմատ: ՅԱՀՎԵՆ է ապահովում անձրևը և պտղաբերությունը, ո՛չ թե *Բահաղը* (տես՝ Սաղմ. 77:18):

❖ **«Երկիրը տեսնում ու դողում է»** Ստեղծագործությունը ուրախանում է իր արարչի ներկայության գալստյամբ (տես՝ Սաղմ. 77:18, 96:9, 104:32, 114:7): ՅԱՀՎԵՆ գալիս է (թե՛ ժամանակավոր և թե՛ էսկատոլոգիական առումով՝)

1. օրհնելու համար
2. դատաստանի համար

երկուսն էլ կարելի է տեսնել Սաղմ. 96:11-13-ում:

97:5 «Բլուրները հալչում են . . .» Սա հ. 4-ի նման մի համար է (տես՝ Սաղմ. 46:6, Ամոկա 9:5, Միքիա 1:4, Նաում 1:5):

❖ **«ամբողջ երկրի ՏԻՐՈՋԸ»** Տիեզերական այս շեշտադրությունը հստակ հայտնվել է Սաղմոս 96:145-ում: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀՎԿԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ:

MT տալիս է «ՏԻՐՈՋ (ՅԱՀՎԵ) առջև, Տիրոջ (*Աղոն*) առջև»: Հիմնականում սա հաստատում է երկու ճշմարտություն՝

1. լեռները՝ բլուրները հալչում են իրենց Արարչի (ՅԱՀՎԵԻ) գալստյամբ
2. Արարիչը ամբողջ երկրի *Աղոն* է

97:6 Այս համարը աստվածաբանորեն և լեզվաբանորեն կապված է Սաղմ. 19:1-6-ի հետ: ՅԱՀՎԵԻ հայտնության տիեզերական առանձնահատկությունը հայտնված է ստեղծագործության՝ բնության մեջ (այսինքն՝ բնական հայտնություն, տես՝ Հռոմ. 1:19-20, 2:14-15): Տես՝ Սաղմ. 19:1-6-ի գրառումները:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱԳՄՈՍ 97:7-9

⁷Թող ամաչեն բոլոր նրանք, որ ձուլված թագիների են ծառայում,

Որ կուռքերով են պարծենում .

Նրան երկրպագեցե՛ք, բոլոր աստվածնե՛ր:

⁸Միոնը լսեց և ուրախացավ,

Եվ Հուդայի դուստրերը հրճվեցին Քո դատաստանների համար, ո՛վ ՏԵՐ:

⁹Քանի որ Դու, ՏԵՐ, Բարձրյալ ես ամբողջ երկրի վրա՝

Չափազանց բարձր բոլոր աստվածներից:

97:7-9 Այս պարբերության մեջ նշվում են երեք անձիք՝

1. կռապաշտները՝ Սաղմ. 97:7

ա. թող ամաչեն (BDB 101, KB 116, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով)

բ. որ պարծենում են (բառացի՝ «փառաբանում են», BDB 237, KB 248, *Hithpael*)

գ. անգամ նրանց սուտ աստվածները պետք է երկրպագեն ՅԱՀՎԵԻՆ (BDB 1005, KB 295, *Hishtaphel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, մեջբերված Եբր. 1:6-ում LXX-ից, տես՝ 2 Օրինաց 32:43 LXX-ում)

2. Հուդայի ցեղի մարդիկ (կամ Իսրայելացիները), Սաղմ. 97:8

ա. Միոնը ուրախացավ (BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ *վալ*-ով, տես՝ Սաղմ. 48:11)

բ. Հուդայի դուստրերը հրճվեցին (BDB 162, KB 189, *Qal* ԱՆԿԱՏԱՐ *վալ*-ով) ՅԱՀՎԵԻ դատաստաններով

գ. անշուշտ հնարավոր է, որ վերը տրված ա. կետը Երուսաղեմի համար է, իսկ բ. կետը՝ շրջապատող չպարսպապատված գյուղերի:

3. Իսրայելի Աստվածը, Սաղմոս 97:9

ա. ՅԱՀՎԵՆ (BDB 217)

բ. Բարձրյալ (*Էլիոն*, BDB 75, տես՝ Սաղմ. 47:2)

գ. մեծարված (BDB 748, KB 828, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ), բոլոր աստվածներից վեր (*Էլոհիմ*, տես Սաղմ. 95:3-ի գրառումը)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Բ և Գ:

97:7ա «ձուլածո բազիններ . . կուռքեր» Սրանք իրար հետ զուգահեռ պոետիկ կապի մեջ են:

1. ձուլածո բազիններ – BDB 820, հիմնականում ունի ինչ-որ բանի տեսքով ձուլված պատկերների իմաստ (տես՝ Ելից 20:4, 2 Օրինաց 4:16, 23, 25, 5:8, 27:15, Դատ. 18:31, Եսայի 40:19, 20, 42:17, 44:9, 10, 17, 45:20): Սաղմոսներում այն կարելի է գտնել միայն այստեղ, սակայն նմանատիպ արմատով խոսք առկա է նաև Սաղմոս 78:58-ում:

2. կուռքեր – BDB 47, հիմնական իմաստը՝ թույլ, անբավարար, անարժեք բան (տես՝ 1 Մնաց. 16:26, Հոր 13:4, Սաղմ. 96:5, Եսայի 2:8, 18, 20, Երեմ. 14:14): Սաղմոսներում այն կարելի է միայն երկու անգամ հանդիպել:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՈՎՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

97:7բ «Նրան երկրպագեցե՛ք, բոլոր աստվածնե՛ր» Սա ինքնին ճանաչում է, որ գոյություն ունեն այլ հոգևոր էակներ:

1. բարի

ա. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԵՐԿՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

բ. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲԸ, սրբերը

2. չար

ա. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ԵՎ ԴԵՎԵՐ

բ. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԵՎԵՐԸ ՀԿՈՒՄ

«Աստվածներ» տերմինը *Էրոհիսն* է: Այս ճկուն տերմինի ավելի լիարժեք քննարկման համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Գ.

Ուշադրություն դարձե՛ք Սաղմոս 96:4-5-ում «աստվածները» վախենում են Նրանից, իսկ այստեղ՝ «աստվածները» երկրպագում են Նրան:

97:8 «Սիոն» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՈՆ

❖ «**Հուդայի դուստրերը**» Այս նկարագրությունը հաճախ կիրառվում է այն գյուղերի համար, որոնք շրջապատում են Երուսաղեմը (տես՝ Սաղմ. 48:11):

❖ «**Քո դատաստանները**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՆ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ, VI:

❖ «**Ո՛վ ՏԵՐ**» Սա Իսրայելի Աստծո նախախնայնությունն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.

97:9 «Դու Տերն ես» Տես՝ վերոնշյալ գրառումը:

❖ «**Բարձրյալ**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Բ.

❖ «**ամբողջ երկրի վրա**» Սա ՅԱՀՎԵԻՆ որպես Արարիչ հաստատելու կերպ է: Ամեն բան, որ գոյություն ունի՝ Նրանից է (տես՝ Ելից 9:29, 19:5, 2 Օրինաց 10:14, Հեսու 3:11,13, 1 Մնաց. 29:11, Հոր 41:11, Սաղմ. 24:1, 89:1, Միքիա 4:13, Չաբ. 6:5):

❖ «**չափազանց բարձր բոլոր աստվածներից**» Տես ամբողջական գրառումը վերը նշված հ. 7-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵ, ԴՔՍ. ՄԱՂՄՈՍ 97:10-12 ¹⁰Դուք, որ սիրում եք ՏԻՐՈՋԸ, ատեցե՛ք չարությունը: Նա պահում է Իր սրբերի անձերը, Ամբարիշտների ձեռքից ազատում է նրանց: ¹¹Արդարի համար լույս ծագեց, Եվ սրտով շիտակների համար՝ ուրախություն: ¹²ՏԻՐՈՋՈՎ ուրախացե՛ք, ո՛վ արդարներ Ու գոհացե՛ք Նրա սրբության հիշատակով:</p>
--

97:10-12 Այս պարբերությունը նկարագրում է ՅԱՀՎԵԻՆ մեծարելու պատշաճ կերպը: Նա այն Միակն է, որ՝

- պահպանում է (BDB 1036, KB 1581, *Qal* ԴԵՐԲԱՅ) անձերը (*nephesh*, BDB 659, տես՝ Ծննդ. 35:18-ի առցանց գրառումը) Իր սրբերի (BDB 339, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲԸ, Սրբերը):
- ազատում է (BDB 664, KB 717, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) նրանց ամբարշտի ձեռքից
- ծագեցնում է (BDB 281, KB 282, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) լույս արդարի համար (տես՝ Սաղմ. 97:4ա)
- ծագեցնում է ուրախություն սրտով շիտակների համար
Հետևաբար, ինչպե՛ս պետք է արձագանքեն սրբերը՝ հավատարիմները:
 - ատեն չարը – BDB 971, KB 1338, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
 - սիրեն ՅԱՀՎԵԻՆ – BDB 12, KB 17, *Qal* ԴԵՐԲԱՅ (տես՝ ստորև տրված տեքստային հարցը)

3. Տիրոջով ուրախանան – BDB 970, KB 1330, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 32:11
4. գոհանան Նրա սուրբ անունից – BDB 392, KB 389, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 30:4

97:10ա

NASB, NKJV, JPSOA, Peshitta, LXX «**դուք, որ սիրում եք ՏԻՐՈՋԸ**»
NJB, REB, NRSV «**ՅԱՀՎԵՆ սիրում են, նրանց, ովքեր . . .**»

MT տալիս է «դուք, որ սիրում եք ՅԱՀՎԵՆ, ատեցե՛ք չարը»: UBS Տեքստային Նախագիծը՝ էջ 370, գնահատում է “A” MT տարբերակը (NASB): Հավատարիմ հետևորդները, ովքեր սիրում են (BDB 12, KB 17, *Qal* ԴԵՐԲԱՅ) ՅԱՀՎԵՆ, նաև «ատում են» (BDB 971, KB 1338, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) չարը:

Սուրբգրային հավատքը մի բանից դարձի գալն է («ատել», BDB 971, KB 1338, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) մեկ այլ բանի («սիրել», BDB 12, KB 17, *Qal* ԴԵՐԲԱՅ): Երկուսն էլ շատ կարևոր են:

1. ապաշխարություն
2. հավատալ, վստահել, հավատք և հավատարմություն

97:10բ «անձերը» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . NEPHESH

❖ «**Իր սրբերի**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՍՈՒՐԲԸ, Սրբերը

❖ «**ձեռքը**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՁԵՌՔ

97:11ա «լույս է ծագում» MT տալիս է «ցանվում» (נר, BDB 281, KB 282), իսկ LXX, Փեշիտտա և Վուլգատտա տարբերակները՝ «ծագում» (הור, BDB 280), որը կարծես թե ավելի շատ է համապատասխանում նկարագրությանը (NRSV, TEV, REB, տես՝ Սաղմ. 112:40):

UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 371) տալիս է «ցանել» բառին “C” գնահատական (այսինքն՝ բավականին կասկածելի):

97:11բ

NASB, NKJV, TEV, LXX, Peshitta «**ուրախություն**»
NRSV, REB, NJB «**ցնծություն**»
JPSOA «**փայլ**»

Ուշադրություն դարձրե՛ք բառախաղին:

1. Ուրախություն, ցնծություն, הרהב ԳՈՅԱԿԱՆ, BDB 970, KB 1333, տես՝ հաջորդ համարը *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. փայլ, JPSOA հայտարարում է, որ սա բառախաղ է (տես՝ KB 13334, #4), որը նշանակում է թե՛ «փայլ» (որը համապատասխանում է հ. 11-ի «լույսի» հետ) և թե՛ «ցնծություն» (որը համապատասխանում է հ. 12-ի «ցնծացե՛ք» բառի հետ):

97:12 «ո՛վ արդարներ» Սա զուգահեռ է՝

1. «Նրա սրբերը» խոսքի հետ՝ հ. 10բ-ում
2. «արդարի համար» խոսքի հետ՝ հ. 11ա-ում
3. «սրտով շիտակի համար» խոսքի հետ՝ հ. 11բ-ում

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՍՈՒՐԲԸ, Սրբերը

❖ «**Նրա սուրբ հիշատակը/անունը**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՍՈՒՐԲ և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵՆ ԱՆՈՒՆԸ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս է այս Սաղմոսը փոխկապակցված նախորդ Սաղմոսի հետ:
2. Ի՞նչ է նկարագրում Սաղմոս 97:2ա:
3. Ինչպե՞ս են Սաղմ.97:4ա և 6 կապված «Բնական հայտնության» հետ:
4. Ովքե՞ր են Սաղմ.97:9բ-ի «աստվածները»:
5. Վերջին պարբերության մեջ ի՞նչ է ասում ՅԱՀՎԵՆ Իր հավատարիմ հետևորդներին, որ անեն: